

հուսաց, Եւ պատմաւմ են բնակիչները՝ թէ կարևորների մեծութիւնը հաւկիմի չափ և երբեմն մեծ սառուցի կտորներ վայր էին թափում այնպիսի սաստկութիւնով, որ գաշտումը դժուռած շատ անառուներ և հարիւրաւոր ոչխարներ ոչնչացել էին այս յիշեալ զիւղերում և նոցա շրջակայքերում։ Այս հեղեղի ջրերը իւրաքանչիւր փողոցներոց վաղեղով աջ և ձախ աւերելով և քանվելով զանազան մողոցներում կմիանային և կանցնեին քաղաքի հասարակաց մեծ պարտիզից և մեծ հըսրագարակից, և երեք վերս հեռաւորութեամբ արուարձաններից քաղաքիս ջուրագույն, և ներբեն ջենաբանի ձօրակի միջից անցնելով՝ ուղղակի դէպի Ուշեաւուր զիւղը Տաճկաց, և քիչ սորանից հետու Հրազդան գետն կմակի զանազան բերաններով՝ որ երեանից 15 վերս հեռաւորութիւն ունի։

ԿԱՐԱԳԵՑ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶՅԱՆԻ

4875 -ի 28 -ն ՕՀԱՐԴԻՐԱԿ

յերեան։

ԱՐԻՒԹԵԱՆԱՑ ՆԱԽԵՔ

Խ. ՀԱԴՐՈՒ-ԵԼՅԱՆ Ա. Ե. Ա. ՀԱՄԱԴՐՈՅ.

Ես կարգացի խօրին ուշագրութիւնով՝ ներկայ տարւոյ Յուլիս ամսուայ Արարատ պատուական ամսագրի թերթերի մէջը զետեղուած բազմատաղանդ ծերունի Պ. . . Գարրիէլ Պատկանեանցի յօրինած իմաստալից յօդուածն. իսկցին համոզւեցայ դէպի նորա արդարացի զրուածներն, որի մասին արդարեւ ամենայն վիճակում բաց ի պաշտօնական գործով զբաղւուած հօգեւորական ներիցն, կան ևս հոգեւորականներ և վարժապետներ, որը եթէ կամովին չկափուցին իւրեանց տեսարաններ և չկալնուն իւրեանց լույսերը եղեալ ողբարարծանք լուրերն կարող են հաղորդել Արարատ Խմբագրութեանը ի Հրատարակութիւն և ի իրահուսութիւն մեր համազգեցաց սիրելիներին. աչա ես իմ լսածները և տեսածները աղաս պահելով այն կամակոր իրողութիւններէն՝ կցանկամ յատնիլ մեր ազգապարծանք Արարատ Խմբագրութեանդ մի հաւաստի լուր, թէ նուխարագարացի այժմ վերաբնակուող ի Տիփիս քաղաքի, պա-

տուաւոր և աղգասէր վաճառական Պարոն Դաւիթին Արխիպեանց, հերուն հետէ թէկ շարժուած էր իւրեան վասվուոն և ջերմ եւանդովլ Նուխուց վիճակումն մի Աստուածահածոյ ձեռնարկութիւն սկսանել, սակայն չլինելով մի սկզբնապատճառ յիշեալ աղգասէր անձի, նորա օգտաւէտ իղձն և յօժարակամ փափագն կմնար անկատար իւր բնական եւ անգոտ որտի յանդասսանի խորշերումն ծածկուած. իսկ մեր այժմեան Փոխանորդ Բարեշնորհ Վարդապետ Մուրատեանցը ըստ ամենպինի համաձայն մեր որդեսէր Աստուածընտիր Ա. Ե. Համագալ Գէորգայ Դ. րդ Կամուղիկոսի Հոյրախնամ ուսումնասէր և մեծագործ Սուրբ կամացն, ուստի փոյթ կալաւ իւրեան վերայ անխուսափելի պարտաւորութիւն համարե ով, քահանայապատշաճ աղցու սրտառուչ համոզանքով ստացաւ յիշեալ Պարոն Արխիպեանցէ երկը հարիւր րուբրի դրամ, և իւրեան քրտնաջան յատուկ վերահասութիւնով անցիալ 1871 ամին վերանորոգել տուաւ ճալիթու առաքելաշէն կառուցեալ յանուն սրբոյն Աստուածածնայ վանիք հոյրակապ Աւսումնարանի թերթութիւններն, որ աղգասէր անձինքներն երբ կտեսնէին նոյն դպրոցի զրու-թիւնը՝ նորանց քննուշ սրտերը ճմկուիլ կսկսուէր, որ ահա փառք Աստուածոյ զինի աւարտելցն նոյն վանիքի դպրոցի թերթի շմութիւնը, արդէն նոյն վանքումն կայ Վանահայր Մայր Աթոռոյ բնիկ միաբան Եղիշէ Վարդապետն Ամատունի, և ունի քսանաշափ Հայ մանկու աշակերտներ, և կուսացնակ նոյն իւրեանց Մայրենի լեզուի գրականութիւնը և յոյս կայ առաւել ևս ճոխանան նոյն դպրոցի աշակերտներն յուսումն, ի յաւերժական յիշատակ նոյն Պարոն Արխիպեանցին։

Աւստի այս իմ հակիմք յօդուածս ուղղելով դէպի յարգց Արարատ ամսագրի Խմբագրութիւնդ և խնդրեմ խոնարհարար տեղի տայ իւր պատուական թերթերի մէջը Հրատարակել այս սակաւաքանակ զրուածս ի լուր և ի գիտութիւն մեր բարեմի ո աղցայնոց, կցորդումեմ. և այս էլ թէ երբ որ տեսի Հրատարակուած այս իմ գուղնաքեայ յօդուածս, այն ժամանակն ես պատրաստի եմ ու համօղուած իմ զրիչս ձեռքս վեր առած առանց ձանձրանալց զրել և հաղոր-

գել ցանկալի Արարատիդ վերաբերելի կարևոր
ազգային արժանաւոր նիւթերն՝ որն որ ես կիմա-
Նամը նուի քաղաքում:

ՄԿԲՏԻ ՏԵՐ ՅԱԿՈՎՅԱՆՑ.

Ի 25 ՕՀ 1875 թ.

Ի. Ք. Կ. Ե.:

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ի պատասխանի Մշակի մէջ երեցած Սաֆրա-
զեանց պատանւոյ երկու զրութեանց ընդդէմ Ա-
րարատայ Խմբագրութեան և Ագուլիսի Մովսէս
քահանայ Մելիք Ստեփանեանցի վերջինն մինամակ
ուղած է Խմբագրութեան՝ յիշեալ պատանւոյ
բարբանջմունքները ցուցանելով, և ըստ օրինի ի
գատ հրաւիրելով, սակայն Խմբագրութեան այն-
պիսեաց ոչ կարեռութիւն կըտայ և ոչ նշյալի-
սի զրաբանութեանց համար ամսագրոյս մէջ զը-
րութիւն կընդունի և կհրատարակէ:

Աւստի իրաւացի նամակը չարատարակելով հան-
դիրձ միանգամայն կինդրելիք յիշեալ քահանայէն
չըտալ անդպահին պատասխանի, և ոչ այլ միջո-
ցաց դիմել.

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

ՎԵՐՁԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ ՄԻ ԵՒԾ.

Կյսենք, թէ Բ. Դուռն որոշեր է, որ Հակահա-
սունեանք՝ Շարգ-Էրմէնի Քամօլիկի, իսկ Հա-
սունեանք՝ Քամօլիկ անուանին, և այս վերջինք՝
Դարու-Քեահեասի մունենան, Բ. Դրան հետ
քաղաքական յարաբերութեանց համար:

Դաեւ կը լսեմք, թէ Սամաթիա այժմ Հակա-
հասունեանց ձեռքը դտնուած Ա. Աստուածածնայ
եկեղեցին ալ Հասունեանց պիտի յանձնուի, եթէ
աեդոյն Հասունեանք Հակահասունեաններէն շատ
են:

Ա. յագէս անմիանալի կերպիւ կրամնուին մեր
այս ազգայինք, և ե բայց եղբօր դէմ կմնան յա-
փառնական ատելութեամբ:

Գումզ թ. 809 Յուն 28.

ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Ընթերցողք զիտեն արդէն թէ այս անուամբ
ժողով մը հաստատուած է քանի մը շաբաթէ ի
վեր, որոց երրորդ նիստը գումարեցաւ կիրակի օր ի
Ս. Լուսաւորիչ եկեղեցին Վալաթից:

Ամեն որ գիտէ թէ մեր Ազգին համար խիստ
կարեոր էր պատվիսի ժողով մը, որովհետեւ ազգին
մէջ կարող վարժապետք սակաւամթիւ ըլլալով
բնականարար Ազգին զաւակունքը մեծաւ մասամբ
այնպիսիաց ձեռքը յանձնուած են իրը խաղալիկ,
որոնք լիզուի, և ջուսան վրայ փորձառականէ ըլլա-
լութիւն չունենալով ըստ քմաց ուսման եղանակ
մը որոշածին և զայն կը գործածեն, որով և ազ-
գին զաւակները փոխանակ յառաջադիմելու յե-
տախաղաց վիճակի մը կենթարկեն:

Ասկէ 10 տարի առաջ սոյն նպատակաւ Վար-
ժապետական ընկերութիւն մ'ալ հաստատեցաւ,
բայց ոմանց անփութութեամբը և քիչ մը ազատ
խօսելով չարակամութեամբը հազիւ քանի մը ա-
միս շարունակուելէ վերջը, բոլորովին տապալեցաւ
և վարժապետական ընկերութեան մահը և ազգին
վարժարանաց յառաջագէմ զարգացմանն համար
մինչև ցարդ ուսուցման օրինաւոր եղանակ չը կա-
րենալ մոռածուելուն ցաւալի հետևանքները այդ
անձանց գատակնիքն ու գատապարտութիւնն ե-
ղանու երանի թէ սոյն ժողովն ալ առաջնոյն բաղ-
դին վիճակակից չըլլար և իւր գումարումները
շարունակելով տակաւ առ տակաւ յաջողէր զիւ-
րայնել ուսուցման եղանակը:

Վարժապետական ժողովը իւր կիրակնօրեաց
երրորդ նստին մէջ, ուր ներկայ էին Փոխանորդ
հայրը, Օսեան և Միսաքեան Էֆէնտիները, և
100 է շափ ժողովուրդ, ամենայն բարեկարգու-
թեամբ և օրինաւորութեամբ Նախակրթարանի
մէջ աւանդելի ուսմանց վրայ վիճաբանելով զա-
ղցաւ. վարժապետներէն ոմանք Խառն ժողովոյ
կողմանէ վաւերացեալ Թաղ. Խորհրդոց հրահա-
գին ուսմանց ծրագիրն ընդունեցին ոմանք զայն
յապաւեցին, այլք ստուարացուցին և երկու ժա-
մու չափ սոյն խնդրոյն վրայ վիճաբանելէ ետև:
միաձայն հաւանութեամբ օրոշուեցաւ ընդհանուր
վիճաբանութիւնը թողով մասնաւորութեանցը